

գրաւել է այն: Քաղաքը շատ տարածուած է, որովհետեւ ամէն տուն իր այգին ունի: Ժողովրդի ապրուստի գլխաւոր աղբիւրները տեղական արտադրութիւններն են — մետաքս, բուրդ, գործուածքներ, եւայլն»:

Քանի որ Ղարաբաղի մասին խօսք եղաւ, արձանագրենք նաեւ Բաղէլի (Շուէլյեքի) բողոքական միսիոնարներին քարոզչութիւնը Շուէլիում, որի մասին Բողենշտէլտ խօսք է անում, ինչպէս «Քրիստոնէութեան մուտքը Հայաստան» գրքոյկի մէջ, այնպէս եւ իր «Յուշեր»ում: Առաջինում վկայում է նա, որ Ս. Գիրքը հայերէն աշխարհաբար թարգմանողը եղել է միսիոնար դ-ր Դիտրիխ, որով եւ իր դէմ է հանել հայ կղերին: Յետոյ նա հեռացուել է Շուէլոյ: «Այժմ քարոզիչ է Մոսկուայի գերման եկեղեցում» (էջ 33):

Իր «Յուշեր»ում թիւրիմացութեամբ թէ 44 երկար տարիներ անցած լինելու պատճառով եւ յիշողութիւնն աղօտանալու հետեւանքով՝ Բողենշտէլտ ասում է ընթերցողին, որ Շուէլիում միսիոնարները զբաղուած են եղել... «հեթանոսներին քրիստոնէութիւն քարոզելով», այն է՝ թաթարներին դարձի բերելով (Ա. 282):

* * *

Թիֆլիսի մասին Բողենշտէլտ յատկապէս քաղցր յիշողութիւններ է պահած եղել: Եւ այդ մանաւանդ այն պատճառով, որ, ինչպէս ինքն է վկայում («Յուշեր», Ա. 272), այդ քաղաքի հետ է կապուած իր՝ Բողենշտէլտի՝ որպէս բանաստեղծի գրական գործունէութեան սկիզբը:

Թիֆլիսի ու նրա ժողովուրդների նիստ ու կացի, կենցաղավարութեան նկարագրութեանն էլ նա նուիրել է շատ էջեր, որոնց վրայ սակայն կանգ առնել հնարաւոր չէ այստեղ: Այսչափը ասենք, որ իր Թիֆլիսեան յիշողութիւնների մէջ («Յուշեր», Ա. 288) Բողենշտէլտ ի մէջ այլոց նկարագրում է իր ծանօթութիւնը հայաղգի կոմս Լորիս-Մելիքովի հետ: Սրան հանդիպած է եղել Բողենշտէլտ Թիֆլիս, իր տանտիրոջ՝ «հայ իշխան Թումանովի» մօտ, մի ճաշկերոյթի միջոցին: Այդ ժամանակ երիտասարդ Լորիս-Մելիքով սպայի աստիճան է ունեցել, Պետերբուրգից արձա-

կուրդով Թիֆլիս եկած՝ իր քեռու, վերոյիշեալ Թումանովի մօտ:

«Վաղ հասակից, — ասում է Բողենշտէլտ, — նա (Լ. Մ.) բաժանուել էր իր հայրենիքից, բայց սրտով նրա հետ էր մնացել միշտ... Նա ապրում է դեռ (1888): Ռուստաճկական պատերազմից յետոյ նրա անունը հռչակ է ստացել ամբողջ աշխարհում... Այժմեան կայսեր (Ալեքսանդր Գ.) զահակալութիւնից յետոյ մի քանի ամառ անց է կացրել Վիսրատնոյում, իսկ ներկայիս ապրում է, հիւանդ վիճակի մէջ, Նիցցայում»:

Աղագրական տեսակէտից հետաքրքրական է նաեւ մի հայ հարսանիքի (Թիֆլիս) ներկարգրութիւնը, որ Բողենշտէլտ ատաջ է բերում իր «Հաղար ու մի օր Արեւելքում» աշխատութեան մէջ (Բ. 228-255):

Բողենշտէլտ հետաքրքրական տեղեկութիւններ է տալիս Թիֆլիսի, նրա ժողովուրդների նիստ ու կացի եւ սովորութիւնների, քաղաքի շէնքերի մասին, եւայլն:

«Հայերի տները» Թիֆլիսում, — ասում է նա, — կազմում են մի տեսակ փոխանցումն վրացիների եւ թաթարների սակիւից դէպի ռուսական ապարանքները՝ նոր քաղաքամասում»:

Այդ վրացական եւ թաթարական «սակիւ»ներն էլ (վրացերէն բառ, նշանակում է՝ տուն) եղել են կէս-գետնափոր հիւղեր: «Վրացական կամ թաթարական սակիւները մէկը միւսից այնպէս դժուար է զանազանել, ինչպէս՝ խլուրդի որջերը» (229):

«Հայերի տները Թիֆլիսում, — շարունակում է Բողենշտէլտ, — ըստ ամենայնի մաքուր են, յարմար՝ բնակութեան համար: Շատերը մինչեւ իսկ իւրաքանչեւ մի տեսակ եւրոպական-ասիական խառնուած շուքով կահաւորուած են»:

Մի հարուստ հայի տուն է ահա, ուր Բող. հարսանիքի է հրաւիրւում մի օր, որ եւ նկարագրում է մանրամասնօրէն: Ժամանակակից հայ ունեւոր դասի բնակարանային սարք ու կարգը, նուազն ու երաժշտութիւնը, պարն ու խաղը, տղամարդկանց ու կանանց հագուստը, կերակուրների տեսակները, հարսանեկան սովորութիւնները, կրօնական արարողութիւնները, — այդ ամէնի մանրամասն նկարագրու-